

Ձեռնհասութիւն չունիմ այս թարգմանութեան արժէքը գնահատելու համար, բայց ամէն պատճառ ունիմ զայն ճշգրիտ ու հաւատարիմ կարծելու, Միայն՝ կը ցաւիմ որ շատ օգտակար նոթերուն եւ յատուկ անուանաց ցուցակին մէջ զոր կցած է իր թարգմանութեան, Պ. Մաքլեր աւելի լայն բաժին մը տուած չըլլայ պատմութեան, Սէքէոսի մէջ շատ նոր տեղեկութիւններ կայ քաղելու՝ Բիւզանդիոնի յարաբերութեանց վրայ Պարսկաստանի, Հայաստանի եւ Արարացւոց հետ. ինծի կը թուի թէ Պ. Մաքլեր բաւականաչափ ի լոյս չէ դրած այն բոլոր գրեթէ անծանօթ մանրամասնութիւնները զոր Սէքէոս երեւան կը հանէ։ Ասկից դատ, հաւկտակ այն շատ ուշադիր ինքամիջին զոր դրած է Պ. Մաքլեր Սէքէոսի մէջ առատօրէն գտնուող երկրաչափական անունները նոյնացնելու, դեռ շատեր չբացատրուած կը մնան ։ . . .

Ձեռ ուզեք թարգմտուել այս մանրամասնութեան դիտողութիւնները, կը նախընտրեմ վերջին՝ յօդուածն վերնացնելով՝ թէ Սէքէոսը թարգմանելով Պ. Մաքլեր մեծ ծառայութիւն մը մատուցած է մեզի. Բիւզանդիոնի պատմութեան համար՝ է. դարուն առաջին կէսին, այս քրոնիկը արդարեւ առաջնակարգ կարեւորութիւն ունեցող աղբիւր մըն է, ուր քաղաքական պատմագիրը՝ Թանկազին տեղեկութիւններ ունի քաղելու

Շ. ՏԻԼ

Պ. Լ. Բիւրֆենան. — Անժէի նկարչական վերջին Սալոնին զոր կազմակերպած էր Գեղարուեստից եւ դրականութեան միջնազգային Միութիւնը, որուն նախադաւն են Փոլ Ատան, Օկրեսթ Ռոտէն եւ Վենսան օ'Էնտրի, մասնակցած է նաեւ հայ երիտասարդ նկարիչ մը, Պ. Լ. Բիւրքեան. Les Tendances Nouvelles գեղարուեստական ամսագիրը (որ օրկանն է Գեղարուեստից եւ դրականութեան միջնազգային Միութեան) այդ Սալոնին նուիրուած յօդուածի մը մէջ համակրութեամբ յիշատակած է նաեւ Պ. Բիւրքեանի գործը, « Գինով կինը » ։ Պ. Բիւրքեան քանի մը տարի ի վեր արդէն կը մասնակցի Փարիզի տարեկան մեծ Սալոններուն, ինչպէս եւ մասնաւոր ցուցադրութեանց,

եւ քննադատները յաճախ համակրութեամբ նկատած են իր գործերը. Թան լրագրի 30 Ապրիլ 1904ի թիւին մէջ, Թիէպո-Սիսոն կը գրէր. « Տան կեանքի ուսումնասիրութեանց մէջ, որէտք է յիշել Պ. Բիւրքեանի փորձի բայց շատ սիրուն մէկ նկարը, Այդ կինը, որ ճաշի ժամուն հիւսելով է դրադած, սեղանին առջեւ ուր հացի կտոր մը եւ հասարակ զինիի գաւաթ մը իրեն հրաւեր կը կարգաւ, ամենասեղմ դիտողութիւն եւ ամենալայն գործադրութիւն կը յայտնէ հակառակ իր փորձի ծաւալին ։ » Գուրիէ Տիւ Սուար (10 մայիս 1905) կը գրէր. « . . . Անգործ կին, Պ. Բիւրքեանի, արտայայտիչ նկար մը, լայն վրձնում ։ » Լե Բաիէ 'Ար. (մայիս 1905) կը գրէր. « Պ. Բիւրքեան, շատ իրապաշտ եւ սրտաշարժ տեսարանի մը մէջ, մեղի ցոյց կուտայ անգործ բանուորուհի մը, որ իր մօրը դեմացը կուլայ ։ »



« Գուրիէ Էօրոփէն » ի Գեթմանիոյ մասին բացած քննութեան, Անանիսի սնօրէնը զրկեց հետեւեալ երկտողը .

« Պաշտօնական Գեթմանիան, զօրեղանալէն ի վեր, ամէն բան բրաւ ինքզինքն ամնաւն ատելի դարձնելու համար ։ Անկա կարող էր, պարտաւոր էր, իր զօրութիւնը գործածել աշխարհի մէջ մեծ ու ազնիւ զեր մը կատարելու. նախընտրեց — շատ սխալ հասկցուած զրապաշտութեամբ մը — ամենայնոք դերը կատարել, Զարականութեան ու համարակալութեան հետ ձեռք ձեռքի, ան կազմեց զխաւոր խոշորդոտը՝ դէպ ի ազատութեան յառաջխաղացութեան տիեզերական շարժումին դէմ ։

« Վիշնիվ Բ. կայսրը, իր ձեռնիկէց ու վրպական խառնուածքով, կարող էր գերազույն ասպետ դառնալ նոր խաչակրութեան մը, յառաջդիմութեան ու լոյսի խաչակրութիւնը խաւաքապաշտութեան եւ բռնապետութեան դէմ. նախամեծար համարեց պատմութեան մէջ « Մեծ մարդապալան » ին եւրոպական մեծ-կայսրեզոսի լրդճուկ կերպարանը վը երեւնալ ։ »

Le Gérant : FRÉDÉRIC MACLER

Imp. D. DOGHRAMADJIAN
18, Rue des Gobelins, Paris.